

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՂՈՒԿԱՍ ՎՐԴ. ԽԱՐԲԵՐԴՑԻ

Ենուծ է մի. Թարու վերջերը: Հօրը ոնուն էր Արքահամ, Գասպարեան տաճմէ: Տիրացած է լոտիներէն և իտալերէն լեզուներուն: Հմատած է Աստվածաբառութեան: Իր նախասիրած տապարէզը եղած է թարգմանչութիւնը: Յավհաննէս կոլոսի բառերով՝ Պաւկոս յաքնահանձոր վարդապետը էր «Կոմրի քաջ անդեմակ լութիներէն լեզուի, որ գրեթէ միայն ի ժակիրելով նոխոգաղափարին նշմորեալ անդէն հայկակոն բռու իր գհամարտկն զրոյց արարերէր» (Յուցակ Զեռ. Պալաթիոյ, էջ 16-17): Աւրիշ մըն ալ զինքը որոկելու համար, 1745ին, կիրած է «քազմաթարգման» բառը (Յուցակ Զեռ. Ս. Յակոբիանց, Ա. Հատուր, էջ 326):

Արգարե Պաւկոս Վազ. չուրչ քառասուն տարի (1716-1753) զրապոծ է, կ. Պոլսոյ մէջ, թարգմանչութիւններ կատարելով լատիներէնէ և իտալերէնէ, որոնք տահասարակ կը մնան անահայ: Թարգմանութեանց լիզուն գժրոխառարար լատինարան խորթ հայկերէն մըն է, որ այդ շրջանին նորոյթ դարձած էր գրական հրապարակի վրոյ:

Իր գլխաւոր մեկնուսներն են եղած Յավհաննէս Պար. Բաղդիշիցի և Յակոբ Պար. Նարեան:

Այսուհեղ կը ներկայացնենք իր կատարած չորս տասնեակ գործերու թարգմանութիւնները, ժամանակագրական կորպով, ըստ կարեւոյն:

1. — Զերմենանդ կետն, Ֆրանչիսկոս Սալեզացի (1609), լատիներէնէ, 1716ին, կ. Պոլսիցի Մազաքիա Պապրի խնդրանքով: — Զեռ. Ս. Յ. թիւ 712:

2. — Գիրք Օրինակաց և Նմանութեանց, Յավհաննէս Սանձէմինեցիի, 1717ին, լատիներէնէ, Մազաքիա Պապրի խնդրանքով: հետագային հրատարակուած վեհատեկի մէջ (1750), Սորոֆեան Սարգիս եպիսկոպոսի կողմէ:

3. — Պատմութիւն Ս. Երկրի, Մարիանոս Մոռոնի (1667), իտալերէնէ, 1725ին, գործակցութեամբ Մազաքիա Պապրի: — Զեռ. Ս. Յ. թ. 153, 724:

4. — Լուսուարութիւն Խոստովանութեան, Գուլիէլմոս Փեփինի (1586), Լատիներէնէ, 1725ին, Բաղդիշիցի Յավհաննէս պատրիարքի յանձնաբարութեամբ: — Զեռ. Ս. Յ. թ. 103, 105: Զեռ. Երեւանի, թիւ 1462:

5. — Աստվածաբառանութիւն Ակոթոսի (1274-1308), Լատիներէնէ, 1729ին, Յավհաննէս պատրիարքի յանձնաբարութեամբ: — Զեռ. Պալաթիոյ, թիւ 3:

6. — Եսրէռութիւն Աշխարհի, Թէոդորոս ձեննարի, իտալերէնէ, 1730ին, յանձնաբարութեամբ Յավհաննէս պատրիարքի: — Զեռ. Պալաթիոյ, թիւ 110:

7. — Բանք Ուկիականք, Յակոբ Վոռամանիոյի, 1731ին, լատիներէնէ, Յարութիւն վարդապետի յանձնաբարութեամբ: — Զեռ. Ս. Յ. թ. 26, 586: — Ծառ տարածուած գիրք մըն է: Ս. Յակոբիանց Զեռագրատան մէջ կայ 31 օրինակ:

8. — Ենրէրթումն Ապաշխարոզի, Պօղոս Աէնեէրեանի, իտալերէնէ, 1732ին, Յավհաննէս պատրիարքի յանձնաբարութեամբ: — Զեռ. Ս. Յ. թ. 789:

9. — Բացոյայտութիւն Հայր մերին, Պօղոս Աէնեէրեայ, իտալերէնէ, Յավհաննէս պատրիարքի յանձնաբարութեամբ: — Զեռ. Անկիւրիոյ, թիւ 289, թարգմանչին գրով:

10. — Անտառ Այլաբանութեան, Հերոնիմոս Լուուէթոյի (1550), լատիներէնէ, 1733ին, Յավհաննէս պատրիարքի յանձնաբարութեամբ: — Զեռ. Պալաթիոյ, թիւ 1:

11. — Աստվածաբառանութիւն (Ճամանակի), Թօվմա Ազուինացի (1226-1274), լատիներէնէ, 1734ին, Յավհաննէս պատրիարքի յանձնաբարութեամբ: — Զեռ. Ս. Յ. թ. 1332:

12. — Արհաս Բժշկութեան, Բհոնարդոս Քրիսթինի, իտալերէնէ, 1735ին, կ. Պոլսիցի կարոսական Բժշկի խնդրանքով: — Զեռ. Ս. Յ. թ. 1874:

13. — Կանոնք Կուսանաց Ռւսոսւլացի, 1736ին, իտալերէնէ, Պատրի Լամբէի խնդրանքով: — Զեռ. Ս. Յ. թ. 1373:

14. — Փիլիսոփայութիւն, Անտառիսս
կոռւսիսի (1666), լատիներէնէ, 1737ին,
Յովհաննէս պատրիարքի յանձնաբարու-
թեամբ. — Զեռ. Արմաշի, թիւ 64:

15. — Պարտէզ Հովուաց, Յակոբ Մար-
կանաբասի, լատիներէնէ, Յովհաննէս ո-
պատրիարքի հրամանով. — Զեռ. Դալա-
թիոյ, թիւ 35:

16. — Գիրք որ կոչի Քաղաքավարու-
թիւն, 1740ին, իսակերէնէ, Յովհաննէս ո-
պատրիարքի յանձնաբարութեամբ. — Զեռ.
Ս. Յ. Թ. 1874:

17. — Անտառ. Նորագոյն Մտածմանց,
Աղեքոսանդր Գալամաթոյի, իսակերէնէ,
1741ին, Յովհաննէս պատրիարքի յանձ-
նաբարութեամբ. — Զեռ. Դալաթիոյ, թիւ
31. — Ծառ տարածուած գիրք մընէ: Ս.
Յակոբեանց Զեռագրուան մէջ կայ 23 օ-
րինակ: Ասոնց վրայ կրնանք աւելցնել
Պօղոս Աղբիանուազուեցիի աշխատառի-
րած համառատութիւնը, որմէ ևս կը
գտնուի 11 օրինակ:

18. — Զարչարանք Տեսան մերոյ,
Տոմինիկեան Եւսեբիսսի, «Յարգմանեցաւ
յիտալկան լեզուէ ի հայկական բարբառ
... օժանդակութեամբ տեսան Սամուէլի
տասուածուարան վարդապետի Եղնկացւոյ
... յամի Տեսան 1741»: — Տես Ցուցակ
Զեռ. Ս. Յակոբեանց, Գ. Համար, էջ 206:

19. — Զերմեռանդ Մտածմունք Ս.
Օգոստինոսի, իսակերէնէ, 1747ին, Նոյ-
եան Յակոբ պատրիարքի յանձնաբարու-
թեամբ. — Զեռ. Դալաթիոյ, թիւ 70:

20. — Մեկնութիւն Երգաց Երգոյն,
Բեռնաբգոս Արքայի, լատիներէնէ, 1748ին,
Կ. Պոլսեցի Տիր. Ստեփանոս Նոտարի
յանձնաբարութեամբ. — Զեռ. Ս. Յ. Թ. 199:

21. — Գիրք Մտածմանց Օգոստինոսի,
Անսելմոսի, Բեռնաբգոսի և Խտիոթոսի,
1749 ին, լատիներէնէ, Կ. Պոլսեցի Ստե-
փանոս նոտարի խնդրանքով. — Զեռ. Ս.
Յ. Թ. 1393:

22. — Զեռածական Վարդապետու-
թիւն, լատիներէնէ, 1749 ին. — Զեռ.
Զմանափ, թիւ 658:

23. — Աստուածաբանութիւն (Տեսա-
կան) Թովմա Ազուինացիի, լատիներէնէ,
1751 ին, Պոնտոսի Առաջնորդ Ղաղար Ար-
քեպիսկոպոսի խնդրանքով. — Զեռ. Ս.
Յ. Թ. 20:

24. — Առարկութիւնք և Լուծմունք,
Միքայէլ Յեպուռասի (1680), լատիներէնէ,
1753 ին. — Զեռ. Ս. Յ. Թ. 118, 1496:

Բացի վերոգրեալներէն Դուկաս վար-
դապետ՝ Նոյեան Յակոբ պատրիարքի
յանձնաբարութեամբ թարգմանոծ է լու-
տիներէնէ, 1745—1753 թուականներուն,
կուռնելիսս Ալափիտէի Ս. Գրոց վրայ
յօրինած մեծածաւալ Մեկնութիւնները.
Կը ներկայացնենք Ս. Գրոց կարգին հա-
մաձայն:

25. — Մեկնութիւն Հնգամատենի. —
Զեռ. Ս. Յ. Թ. 100:

26. — Մեկնութիւն Առակացն Սողո-
մոնի. — Զեռ. Դալաթիոյ, թիւ 14, թարգ-
մանչին գրով:

27. — Մեկնութիւն Ժողովողի, 1752 ին.
— Զեռ. Դալաթիոյ, թիւ 16:

28. — Մեկնութիւն Երգաց Երգոյն. —
Զեռ. Ս. Յ. Թ. 643:

29. — Մեկնութիւն Խմառաւթիոն,
1751 ին. — Զեռ. Դալաթիոյ, թիւ 15:

30. — Մեկնութիւն Եսայեայ. — Զեռ.
Դալաթիոյ, թիւ 10, թարգմանչին գրո-
չութեամբ: Զեռ. Ս. Յ. Թ. 59:

31. — Մեկնութիւն Երեմիայի, 1750 ին.
— Զեռ. Դալաթիոյ, թիւ 11:

32. — Մեկնութիւն Եղեկիէլի, 1747 ին.
— Զեռ. Դալաթիոյ, թիւ 13, թարգման-
չին գրով:

33. — Մեկնութիւն Դանիէլի, 1745 ին,
Պոնտոսի Ղաղար հպիսկոպոսին հրամա-
նով. — Զեռ. Ս. Յ. Թ. 113:

34. — Մեկնութիւն Ժ. Մարգարէից,
1746 ին. — Զեռ. Ս. Յ. Թ. 24, 67:

35. — Մեկնութիւն Գործոց Առաքե-
լոց. — Զեռ. Ս. Յ. Թ. 80, 150:

36. — Մեկնութիւն Ժ. Թղթոցն Պո-
ղոսի, 1749 ին. — Զեռ. Դալաթիոյ, թիւ
18, թարգմանչին ձեռագիրը:

37. — Մեկնութիւն Կաթուղիկեայց,
1749 ին. — Զեռ. Դալաթիոյ, թիւ 20,
թարգմանչին ձեռագիրը:

38. — Մեկնութիւն Յայտնութեան,
«Յարգմանեցեալ եզեւ ի Դուկասու վար-
դապետէ Աստրեբթացւոյ. խնդրանոք և
ծախսիք մեծի Պատրիարքի Բիւզանդիոյ
Տեսան Յովհաննիսի Աստուածաբանութեան
Վարդապետի Բաղիշեցւոյ»: — Զեռ. Ս.
Յ. Թ. 61:

39. — Մեկնութիւն Սիրաքոյ, 1753 ին.
— Զեռ. Դալաթիոյ, թիւ 17:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԴԵՐ

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆԻ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ

—

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ. — Նոր Զուղայի Ամենափրկիչ Վանքը հիմնուած է Պարսկաստանի Աստվածան քաղաքին մօտ, ժի. գարուն սկիզբը, Զուղային տարագրուած Հայոց կողմէ, ի յիշտակ իրենց Հին Զուղայի համառուն վանքին, Նախապէս եղած է պարզ և անփառունակ շինուածք մը, որ կէս դար ետքը փոխարինուած է ընդարձակ և փառաւոր կառուցումներով. — Հմտ. Լ. Գ. Մինասիս, Իրանի Հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 39-71; Պատկերագիրք Ս. Ամենափրկիչ Վանուց, Նոր Զուղա, 1975:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Նոր Զուղայի և Ամենափրկիչ վանքի առաջնորդներէն կը յիշենք տառնեակ մը, հնագոյններէն, և կու տանք հակիրճ տեղեկութիւններ:

1. — Մեսրոպ Արքայիսկոպոս, 1605-1622:

2. — Խաչատուր Արք. Կեարայի, 1623-մ. 1646, աշակերտ Մովսէս Տաթևացիի, Վանքին մէջ հաստատած է տպարտն և 1641ին հրատարակած է «Հարանց վարք» դիրքը:

3. — Դաւիթ Արք. Զուղայի, 1651-մ. 1683, աշակերտ Կեսարացի Խաչատուր վարդապետի Եպիսկոպոս կը ձեռնադրուի երուսաղէմի մէջ ձեռամբ Փիլիպոս Կաթողիկոսի (1651), Վանքը կը վերաշինէ ինը տարուան աշխատանքով (1655-1664): Կը կառուցանէ հոյակապ նոր եկեղեցի:

Այս ցանկը սպառիչ չէ կը կարծենք, այնուհանգերձ յայժ տպաւորիչ է իր քանակին մեծութեամբ: Հազիւ թէ գանուի ուրիշ թարգմանիչ մը, որ նման ծառալուն արդիւնքով կարենայ մրցիլ Խարերդցի Դուկաս վարդապետին հետ:

Ն. ԱԲՔ. ՄՈՎԱԿԱՆ

Հոգ կը տանիի վանական դպրոցին և կը հասցնէ քառանեինը աշակերտներ, որոնցմէ ինը եպիսկոպոս, ինը վարդապետ և տասնմէկ քահանայ:

4. — Ստեփանոս Եպս. Զուղայիցի, 1684-մ. 1698, աշակերտ Դաւիթ վարդապետի: Վանքին տպարտնը աւելի ես կը կարգաւորէ, և 1688ին լոյս կը տեսնէ իր յօրինած Հակածառութեան Գիրքը՝ ընդդէմ պապականոց:

5. — Աղիքանից Եպս. Զուղայիցի, 1699-1706, աշակերտ Զուղայիցի Դաւիթ վարդապետի: Բարեւոք անակեսութեամբ կը կառավարէ իր թեմն ու վանքը, և 1706ին Կաթողիկոս ընտրուելով կը մեկնի Եղմածին: Իր առաջնորդութեան շրջանին (1702) կառուցուած է Վանքին հոյակապ զանգակատունը. — Իրանի Հայկ, Վանքերը, էջ 63:

6. — Մովսէս Եպս. Զուղայիցի, 1706-1725: Կը շինէ Վանքին Առաջնորդարանը:

7. — Դաւիթ Եպս., Բ., 1725-1728: Եղած է նախանձակինդիր՝ քահանաներու պարկեցաւ կենցագավարութեան, և եկեղեցական արարողութիւններու կանոնաւոր կատարման:

8. — Ասունծանուր Եպս. Ֆանգապացի, 1729-1745: Իր հեզ և խաղաղասէր բնաւորութեան պատճառով իրեն տուած են «Ազաւնի» մակդիրը:

9. — Պոլոս Եպս., 1748-1752: Եռամեայ պաշտօնավարութենէ ետք կը պարտաւորուի հրաժարիլ, գատապարաելի ընթացքի հատկանական պատճառով:

10. — Գեորգ Եպս., 1754-1768: Բըռնաւորներու հարստանարարութեանց չգիմանալով կը հեռանայ Զուղայէն և կ'երթայ Բասրայ, և քանի մը տարի այնտեղէն կը վարէ իր առաջնորդուկան պաշտօնը. — Հմտ. Պատմ. Նոր Զուղայու, Հատոր Երկրորդ, Յարութիւն Տէր Յավհանեանց, Նոր Զուղայ, 1881:

ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ամենափրկիչնեան վանքին մէջ, տպարտնի հաստատութենէն առաջ և յետոյ, անպակաս եղած են գրիչներ, որոնք պարապած են եկեղեցական և այլ մատեաններու ընդօրինակութեամբ: Անոնցմէ կը նանք յիշել հետեւալները: